

## ՆՇԱՆԱՌՈՐ ՏՕՆԵՐ.

Նոր-Տարի. — Զանգեզուրում ևս, ինչպէս և Սիսիանում, նոր տարին չէ տօնում: Միայն նոր Գորիսում, առաւելապէս ծառայող տարրը պաշտօնական այցելութիւններ է անում և սրանով վերջանում է տօնը:

Ծնունդ եւ Զրօհնէք. — Յունուարի չորսին, երեկոյեան ամբողջ գերդաստանը բոլորում է խոնջի շուրջը, և տան մեծը կտրում և բաժանում է «կրկենի» կոչուած բաղարջը: Սա ձէթով պատրաստած և ընկոյզով երեսը զարդարած մի բաղարջ է, որի մէջ լոբի, կամ մի հունի կորիզ է դրուած, որ կոչւում է «դովլաթ»: Ում բաժնից որ դուրս է գալիս այս «դովլաթը»՝ նա «օջախի դովլաթ» է համարւում, և այդ տարի նրանից են սպասում տան բախտաւորութիւնը: Զառ անգամ *հրէհո-յ* անասուններին էլ են բաժին հանում, և եթէ նրանց բաժնից է դուրս գալիս՝ կարծում են, որ բախտաւորութիւնը, հարստութիւնը նրանցից պիտի գայ: Եթէ մի որեւէ պատճառով չեն կարողանում կրկենի պատրաստել՝ լոբին կամ կորիզը ձգում են սպասի մէջ և նոյն կերպ գուշակութիւններ անում:

Ծննդեան երեկոյին երեխաները խմբեր կազմած շրջում են տները «Աւետիս» ասելու: «Զուն թակողը» մահակը ձեռին առաջ է ընկնում. նրան հետևում են երկու կամ երեք երեխայ, որ եկեղեցական շապիկի փոխարէն իրանց մայրերի շապիկներն են հագած լինում. ապա գնում են «ալիւր տանողը» — տոպրակը շալակած, և «ձու հաւաքողը» — սալէն զլխին: Մտնելով մի տուն՝ նրանք ձախ ու ծուռ երգում են և մի բան առնելով դուրս գալիս, ուրիշ տուն մտնում:

Զրօհնեաց օրը երիտասարդները ձի են հեծնում և իրենց շնորհքը ցօյց են տալիս ձիարշաւի մէջ: Խաչը ջուրը ձգելու ժամանակ այս բոլոր ձիաւորները մտնում են գետի մէջ և լե-

տոյ զալիս ճանապարհը կտրում են ու հարուստներից նուէրներ պահանջում, որ լիտոյ այդ դրամով քէֆ անեն:

Օրհնուած ջրից պահում են, որ դրանով ողողեն ու սրբեն պղծուած ամանները, այսինքն որոնց շուն, կատու՝ և առհասարակ որևէ անասուրբ կենդանի է զիպել:

**Ս. Սարգիս.**— Աւրբաթ երեկոյին մի սկուտեղի մէջ պատանները փոխինդ են մաղում և մէջ տեղը մի մոմ կամ մի ձանթեղ վառած՝ դնում դռան լետեր, յուսալով որ ս. Սարգիսը իրենց այցելութեան զալիս, ձիու հետքը կը թողնի փոխնդի վրայ: Առաւօտեան նոյն փոխինդով խաշիլ են եփում: Ամանք էլ այդ փոխինդը դռաբով կամ շաքարաջրով շաղում և փոքրիկ, գնդականման «պիւտ»-եր շինում: Չատերն էլ այդ «պիւտերի» փոխինդի մէջ մի լոբի կամ հունի կուտ են դնում, որով, ինչպէս կրկենիով՝ «դովաթ» են գուշակում:

**Բարեկենդան.**—Ս. Սարգսի տօնից սկսած մինչև մեծ պատը ժողովուրդը բարեկենդան է համարում և աշխատում է, որքան կարելի է լաւ ուտել-խմել և ժամանակը ուրախ անց կացնել: Վերջին երեք օրերն ամբողջովին նուիրում են կերութեամբի և ուրախութեան: Այտեղ ևս ինչպէս և Սիփիանում, կիրակի օրը երևան է զալիս «փաշան»—մի ծաղրածու երիտասարդ, փաշալի հանդերձ հագած և իշի վրայ նստած,— որ իւր ծառաների առաջնորդութեամբ շրջում է զիւրը, հազարաւոր ծաղրածութիւններ է անում, իբր տուգանք զբամ հաւաքում, որով լիտոյ ընկերների հետ միասին քէֆ են անում:

Խնձորեսկում 20—30 կանաչ տղամարդի շորեր են հագնում, փափախներ ծածկում, և ապա զիւրի ձորակում մի գութանի լծուելով՝ վար են անում: Բազմութիւնը հաւաքուած գուարճանում է և խրախուսում:

**Տեառնընդառաջ.**—Խնձորեսկում երեկոյեան ժամերգութեան ժամանակ եկեղեցու մէջ տեղը մի մեծ աշտանակ են դնում, վերան 12 մոմ անկած: Յետոյ քահանան քարոզ է

տալիս և հրաւիրում ժամաւորներին որ մոմերը վառեն, նուէր տալով եկեղեցուն: Ապա սկսում է սակարկութիւն, ցանկացողը բղաւում է թէ ինքը ինչքան կրտայ: Ամենից շատ տուողին առաջ են հրաւիրում և ձեռքը լուցկի տալիս: Սա էլ վճարում է խոստացածը և վառում 12 մոմն էլ: Սրանից յետոյ ժամաւորները մօտենում են աշտանակին, փող ձգում դրուած ափսէի մէջ, և սրա մօտ դրուած մոմերից մի մի հատ վերցնում, կպցնում են 12 մոմերից մինից և աշխատում առանց հանդցնելու մինչև տուն հասցնել:

Մի քանի գիւղերում էլ նոր պսակուած երիտասարդները ցրտնի են բերում և եկեղեցու բակում դարսում: Փամասացութիւնից յետոյ ջահի մոմով վառում են և շրջան բռնած պրտրտում շուրջը, իսկ երբ բոցը մի քիչ լիջնում է՝ թռչում են վերայից: Չատերը այդ ցրտնու ճիւղերից վերցնում և տանում են տուն և խրեցնում տան ձակատներին, որպէսզի «աչք չտան»:

Մեծ պաս. — Առաւօտ շատ վաղ պառաւները «պասի պուլու» են շինում, մի սոխի վրայ եօթը փետուր խրեցնելով, և նրան կախում են երգիքի խաչքից, որպէսզի երեխաները նրանից վախենալով պասը չուտեն: Քայց միւսնոյն ժամանակ նա ծառայում է գիւղացիներին որպէս մեծ պասի օրացոյց, որովհետև մեծ պասի ամէն կիրակի օր երեխաները պուլուլից մի-մի փետուր պոկում են:

Գիւղացիները մի-մի շիշ օղի, խնձոր, նուռ առած գնում են տանուտէրի մօտ և շնորհաւորում նոր տարին: Մի քանիսն էլ նոյն կերպով քահանայի մօտ են գնում: Յետոյ ազգականները միմեանց տուն այցելութեան գնալով՝ մեծ պասը շնորհաւորում են միմեանց:

Կէսօրից յետոյ նուագածուները գալիս ածում են տանուտիրոջ դռան առջև և մի բուբլի տալով նրան՝ իրաւունք են ստանում, որից յետոյ արդէն շրջում են գիւղը և ածում:

Գորիսում ժողովուրդը ուխտ է գնում Ս. Մարտիրոսի մատուռը, որ գտնւում է գիւղի հարաւային ձորակի բարձր ժայ-

ուերից մինի մէջ: Սրա միայն արևմտեան կողմը քարից պատ է շարուած, մնացած մասը փորուած է ժայռի մէջ<sup>1)</sup>: Այստեղ կայ մի գերեզման, որի հողը հիւանդները ջրի մէջ լուծելով խմում են իբր դեղ: Այս դեղը տեղացիներին կոչուում է «խնոթուն»:

Ուխտաւորները նստոտում են ժայռի ստորոտում, սուրբ ծառերի ներքև, արևի տակ, և սկսում են ուտել-խմել: Այստեղ էլ երբեմն երևում է բարեկինդանի «փաշան», որ գալիս է իւր ընկերների հետ՝ կիրակի օրը հաւաքած փողերով քէֆ անելու: Զուռնան ածում է, պարը բոլորում, ծիծաղն ու երգը թնդացնում ժայռերը:

Միջինին մի առանձին բան չէ կատարում, բացի այն, որ նշանած երիտասարդի տնից հարսնացուին նուէր է ուղարկում եփած տակ, խաշխաշով հաց, ձիթով զաթայ, մի շիշ օղի և մի կուլայ զինի:

Ծաղկագւռոյ (տեղական բարբառով՝ «գարգար»): Այդ օրը եկեղեցում «ճոռան» և «ճճանակ» են ածում: Եկեղեցու մէջ տեղ կանգնեցնում են մի ուռենու ծառ, և ճիւղերին մոմեր վառում:

Նշանած աղջիկների կեսրանքը մի խաչաձև մոմ վառելով ծառի մոմերից, տալիս են իրենց հարսնացուի ձեռքը և մի կարմիր կամ կանաչ չարդաթ ձգում նրա գլխին:

Փամասացութեան վերջը ժամաւորները թափում են ծառի վրայ և ճիւղերը խլխլելով, տանում տուն պահում են, որպէսզի դրանցով գատիլի նաւակատիքին կիրակուր եփեն:

Չարչարանաց շաբաթ.—Աւագ երեքշաբթի օրը, իմաստուն և լիմար կուսանաց տօնին, եկեղեցում տասը երեխայի ձեռները մի-մի մոմ են տալիս: Յետոյ, երբ կարդացում է լիմար և իմաստուն կուսանաց սուտարանը՝ մի տիրացու առաջարկում է երեխաներին՝ վերցնել ափսէի մէջ ածած 10 կլո-


<sup>1)</sup> Դռան կամարակալ քարի վրայ կայ հետևյալ արձանագրութիւնը. Ես դագանչեցի Ծառուրս և... շինեցաք ս. մատուռս քվ. 16ՃԾԲ.

րած թղթերից մի մի հատ, որոնցից հնգի վրայ «իմաստուն», իսկ միւս հնգի՝ «չիմար» է գրուած: Ենմիջապէս վիճակով «չիմար» դուրս եկողներին մոմերը հանգցնում են և ամէն կողմից նախատում նրան, որ չիմար է լինելու: Իսկ «իմաստուններին» գովում են:

Աւագ չորեքշաբթի օրը կոչում են չիֆ չորեքաբթի: Այդ օրը այգեպանները կացիները ձեռնին յարձակում են պտուղ չը տուող ծառերի վրայ և սպառնում են կտրել, իսկ մի ուրիշ մարդ արգելում է նրանց, յորդորելով, որ մի տարի ևս սպասեն, այս տարի անշուշտ կը բերի:

Աւագ հինգշաբթի.— Ամէն տնից տանում են եկեղեցի մօտ  $1/2$  Ֆունտ կարագ, մի քանիսն էլ ոտները սրբելու և լուալու համար շոր—«վիլա»:— Փամերգութեան միջոցին քահանան լուանում է բոլոր ծերունիներին աջ ոտները և կանանց ու փոքրերի աջ ձեռները և օրհնուած իւր քսում: Այս իւրից իրենք ժամաւորները քսում են ճակատներին, աչքերին, մի քիչ էլ տանում են տուն և ձգում են իւրի կարասի մէջ, որ իւրը առատ և օրհնուած լինի:

Սգի ուրբաթ.— Այս օրը, իբրև սուղի նշան՝ երեսները չեն լուանում, եկեղեցում ծուներ չեն դնում: Առաւօտեան ժամերգութիւնից լետոյ դնում են դերեզմանատուն և դերեզմանների վրայ մոմեր վառում: Մայրերը եկեղեցում իրենց արու երեխաների մէջքերին կարմիր ու կանանչ թելով «ուրբաթառու» են կարում, որ ունի հետևեալ ձևը.



Եւ այս նրա համար, որ երեխային կայծակ չխփէ:

Իսկ փոքրիկ աղջիկներին նոյն փորձանքից ազատ պահելու համար՝ պողպատի մատանի են դնում մատներին:

Աւագ շաբաթ օրը մի քանիսը ծոմ են պահում և երեկոցան ճրագալոյցին եկեղեցի դալիս՝ ձու կամ ձուկ են տանում իրանց հետ, որ «ժամաւ քաշեն» և յետոյ նրանով թաթախուեն: Լինում են մարդիկ, որ «Աւէք կերէք» ասելիս՝ հէնց եկեղեցու մէջ ուտում են ձուն:

Ժամերգութիւնից անմիջապէս յետոյ բոլորը ընթրում են: Պասը բաց են անում լուսով: Չուկը և թանաւ ճաշը (թանէ սպասը), որ այդ օրը «տղոպած» է կոչուած՝ այդ օրուայ յատուկ կերակրներ են համարւում և զրեթէ բոլորի տանն էլ պատրաստւում են:

Այդ երեկոյի պատարագը մինը «առած» է լինում՝ և պատարագից յետոյ նա քահանային և մի քանի ժամաւորներին հրաւիրում է իւր տանը ընթրելու:

Զատիկ.— Կիրակի լուսաբացին շատերը գնում են եկեղեցի: Մի քանիսն էլ մանուշակի խաչաձև փնջեր են տանում իրենց հետ և դնել են տալիս սեղանի վրայ: Համարեա բոլոր ժամաւորները մտն են առնում և վառում: Երբ «Այսօր յարեալ ի մեռելոց» շարականն սկսում են երգել՝ երեխաները ճրուօն են ածում: «Փռաք ի բարձունս» ասելիս՝ քահանաներից մինը Աւետարանը տանում է երիտասարդների և երեխաների մօտ, որոնք համբուրում և մի-մի ներկած ձու են տալիս քահանային: Սա էլ այս ձուերից մի քանիսը տալիս է տիրացուներին և զիւղի մեծամեծներից մի քանիսին, որոնք եկեղեցու բակում ուտում են:

Մի քանի զիւղերում նոյն օրը հասարակական մատաղ են անում և եկեղեցու դռանը բոլորին բաժանում:

Չու կռուեցնելու սովորութիւնը շատ ընդհանրացած է ոչ միայն երեխաների, այլ և չափահասների մէջ:

Չուերը ներկում են առաւելապէս կարմիր գոյնով, իսկ սգաւորները՝ սև: Կան և գեղին գոյնով ներկողներ:

Երկուսաբքի օրը, մեռելոցին, կերակուր և մրգեղէն վերցնելով իրանց հետ՝ գնում են դերեզմանատուն, ուր գերեզման-

ները օրհնել տալուց յետոյ ուտում են, իսկ մնացորդը բաժանում աղքատներին:

**Համբարձում.**—Վիճակ Հանելու սովորութիւնը վերացել է: Նախընթաց հրեկոյին իլիքիսքի կոչուած խոտը մի մի թիզ չափում և երկու տեղից գունաւոր թիւերով կապում են և եթէ չաջորդ (Համբարձման) օրը խոտը երկարացած լինի՝ գուշակում են, որ երկար են ապրելու:

Տղաների և աղջիկների խմբեր առանձին-առանձին գնում են գտշտերը քէֆ անելու:

**Նաւասարդ.**—Ջանգեղուրի գիւղերն էլ Սիսիանի պէս Նաւասարդի մէկը տարեմուտ են Համարում և միմեանց շնորհաւորում են նոր տարին: Գիւղացիներից շատերը մի մի խնձորի մէջ արծաթէ դրամներ խրած, մի-մի շիշ էլ օղի առած՝ գնում են տանուտիրոջ մօտ և բերածները նրան նուիրելով՝ շնորհաւորում նոր տարին: Նա էլ հիւրասիրում է դրանց:

Այդ օրը ամէն տուն «կորկոտ» է պատրաստում. միայն խնձորեսկեցիք կորկոտի փոխարէն բոզբաշ են եփում:

Գիշերը գոմբըր մաքրում են և անասունների տակ գարի ցանում և նրանց ագիներն կարմիր թել կապում, որպէսզի «տարին առատ և կարմիր օրերով»—երջանիկ—լինի:

**Վարդավառ.**—Տօնի նախորդ հրեկոյին աղջիկները մրգեղէններ են ածում խոնչաների մէջ, ծաղիկներով զարդարում, և տանում մի տան մէջ պաՀ տալիս: Ապա գիւլումներ երգելով պարում, ուրախանում են: Վարդավառի օրը այդ խոնչաներն և ուտելեղէնները առած գնում են Հանդերը, կերակուրներ են եփում, ուտում, երգում և սլարում:

**Ս. խաչ.**—Գրեթէ բոլոր գիւղերից այս օրը ուխտ են գնում Ծիծեռնավանք, այնպէս որ այնտեղ ահագին բազմութիւն է Հաւաքում, և Հազարաւոր ոչխարներ մատաղ են անում: